ՀՀ ՓՊ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱ ՏԱՐԵԼԻՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԷՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ

24.03.2015 12:10

Հայաստանի փաստաբանների պալատի Արմավիրի մարզային համակարգողի գրասենյակը, Արմավիրի մարզպետարանը և էջմիածնի քաղաքապետարանը, Էջմիածնի Կոմիտասի անվան մշակույթի տանը կազմակերպել էին գիտաճանաչողական միջոցառում նվիրված Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցին, որին մասնակցել է Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանը:

Բացման խոսքով հանդես է եկել ՀՀ փաստաբանների պալատի Արմավիրի մարզային գրասենյակի համակարգող Գուրգեն Գրիգորյանը, ով նշել է, որ Ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառում Արմավիրի մարզային գրասենյակը կազմակերպում է արդեն երկրորդ անգամ, որի նպատակն է իրավական գնահատական տալը Ցեղասպանություն իրականացրած Թուրքիայի գործողություններին: Նրա խոսքով Փաստաբանների պալատում գործում է հանձնախումբ, որտեղ քննարկվում են ցեղասպանության ճանաչմանը հասնելուն իրավական գործընթացների մասին հարցեր:

Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանն էլ հայտնել է, որ հայերը պետք է էլ ավելի բարձրացնեն իրավագիտակցությունը, քանի որ այն հայ ժողովրդի ընդհանուր շահն է պահանջում:

Միջոցառման ընթացքում ելույթներով հանդես են եկել մարզի փաստաբաններ, ուսուցչուհիներ, մարզպետարանի աշխատակիցներ և դպրոցների աշակերտներ:

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })